

ՊՈԼԻՈ ՊԱՏՎԱՍՏՆԵՐ

Ի՞նչ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՔ

1 Ի՞նչ է պոլիոն

Պոլիոն վիրուսից առաջացող հիվանդություն է: Նա անցնում է երեխայի (կամ մեծահասակ անհատի) մարմնի մեջ բերանի միջոցով: Միշտ չէ որ այն լուրջ հիվանդություն է պատճառում: Սակայն երբեմն *անդամալուծություն* (թեւերն ու ոտքերը շարժելու անկարողություն) է պատճառում: Այն կարող է վարակվողներին մահվան ենթարկել, սովորաբար անդամալուծելով շնչառությանը օգնող մկաններին:

Ժամանակին Միացյալ Նահանգներում պոլիոն շատ ընդհանրացած է եղել: Նախքան պոլիոյի դեմ պատվաստ ունենալը, այն յուրաքանչյուր տարի հազարավոր մարդկանց անդամալուծ է դարձրել եւ մահ է պատճառել:

2 Ինչու՞ պետք է պատվաստվել

Չեզոքացված Պոլիոյի Պատվաստը (IPV) կարող է կանխել պոլիոն:

Պատմական Ակնարկ. Միացյալ Նահանգներում 1916-ի պոլիոյի համաճարակը 6,000 մահացու դեպք պատճառեց եւ անդամալուծ դարձրեց 27,000-ից ավելի: 1950-ականների սկզբում յուրաքանչյուր տարի գոյություն ունեւոր պոլիոյի 20,000 դեպքեր: Պոլիոյի դեմ պատվաստումներ սկսեցին տրվել 1955-ից: 1960-ին, դեպքերի քանակը նվազեցին 3,000-ի եւ 1979-ին արդեն գրանցվեց տարեկան միայն 10 դեպք: Միացյալ Նահանգներում եւ այլ երկրներում պոլիոյի դեմ պատվաստից ձեռք բերված հաջողությունը, ստեղծեց պոլիոն վերացնելու համաշխարհային ճիգ:

Այսօր. 20 տարիից ի վեր, պոլիոյի մոլեգին դեպքեր չեն գրանցվել Միացյալ Նահանգներում: Սակայն, այս ախտը տակավին ընդհանրացած է աշխարհի որոշ մասերում: Եթե մենք պաշտպանված չլինենք պատվաստով, բավարար է այլ երկրից բերվի պոլիոյի մեկ դեպք, որպեսզի հիվանդությունը վերստին տարածվի: Եթե աշխարհից ընդհանրապես ախտը վերացնելու ջանքը հաջողվի՝ կգա օրը որ պատվաստի կարիքը չենք ունենալ: Մինչ այդ, հարկավոր է շարունակել մեր երեխաներին պատվաստել:

3 Ո՞վ պետք է ընդունի պոլիոյի պատվաստ եւ ե՞րբ

IPV-ն սրկում է, որը համաձայն տարիքի տրվում է սրունքից կամ բազուկից: Պոլիոյի պատվաստը կարող է տրվել ուրիշ պատվաստների հետ միաժամանակ:

Երեխաներ
Մեծամասամբ մարդիկ պոլիոյի պատվաստ պետք է ընդունեն երեխա ժամանակ: Երեխաները ընդունում են IPV-ի՝ դեղաչափեր հետեցյալ տարիքներում.

- ✓ 1 դեղաչափ 2 ամսականում
- ✓ 1 դեղաչափ 4 ամսականում
- ✓ 1 դեղաչափ 6-18 ամսականում
- ✓ Լրացուցիչ դեղաչափ 4-6 տարեկանում

Չափահասներ

Չափահասները շատերը կարիքը չունեն պոլիոյի դեմ պատվաստվելու որովհետեւ նրանք արդեն պատվաստվել են երեխա ժամանակ:

Սակայն չափահասների երեք խմբեր գտնվում են բարձր վտանգի տակ եւ *անհրաժեշտ է* որ հաշվի առնեն պոլիոյի պատվաստումը.

- (1) անհատներ որոնք ճամբորդում են աշխարհի այն մասերը որտեղ պոլիոն ընդհանրացած է,
- (2) տարրալուծարանի աշխատողներ որոնք կարող են ձեռք տված լինել պոլիոյի վիրուսին, եւ
- (3) բուժաշխատողներ որոնք դարձնում են պոլիոյով վարակված հիվանդներին:

Այս երեք խմբերին պատկանող չափահասները որոնք **երեք չեն** պատվաստվել պոլիոյի դեմ պետք է ընդունեն IPV-ի 3 դեղաչափեր.

- ✓ Առաջին դեղաչափը որեւէ ժամանակ,
- ✓ Երկրորդ դեղաչափը 1-ից 2 ամիս հետո,
- ✓ Երրորդ դեղաչափը երկրորդից՝ 6-ից 12 ամիս հետո:

Այս երեք խմբերին պատկանող չափահասները որոնք անցյալում **ընդունել են պոլիո պատվաստի 1 կամ 2 դեղաչափ**, պետք է ընդունեն մնացած 1 կամ 2 դեղաչափերը նույնպես: Նշանակություն չունի թե որքան ժամանակ է անցել նախկին դեղաչափ (եր)ը ընդունելուց:

Բերանային Պոլիոյի Պատվաստ. Այլեւ չհանձնարարվող

Կան երկու տեսակի պոլիոյի պատվաստ. **IPV** սրկման ձևը՝ որը այսօր հանձնարարվում է Միացյալ Նահանգներում, եւ կենդանի՝ բերանային պոլիոյի պատվաստ (**OPV**), որը կուլ տալու կաթիլներ են:

Մինչեւ վերջերս OPV-ն Միացյալ Նահանգներում հանձնարարվում էր գրեթե բոլոր երեխաներին: OPV ի շնորհիվ մենք կարողացել ենք երկրից հեռացնել պոլիոն, որը տակավին օգտագործվում է աշխարհի շատ մասերում:

Ձույգ պատվաստներն էլ պոլիոյի դեմ տալիս են անհրաժեշտ վարակամերժություն, սակայն OPV-ի առավելությունն այն է որ նա կանխում է հիվանդության տարածումը այլ մարդկանց: Ամեն դեպքում, որոշ մարդկանց համար (շուրջ 2.4 միլիոնից մեկը), OPV-ն կարող է իրապես պոլիո պատճառել: Քանի որ Միացյալ Նահանգներում պոլիոյով վարակվելու վտանգը բավականին փոքր է, մասնագետները ընդունում են որ բերանային պոլիոյի պատվաստի օգտագործումը չի արդարացնի առաջացրած վտանգը, բացի այն սահմանափակ պարագաներում երբ ձեռք բերվել է թելադրում: Պոլիոյի (IPV) պատվաստը պոլիո չի պատճառում: Եթե դուք կամ ձեր երեխան **OPV է ստանալու, խնդրեցեք հավելվածային OPV ի Պատվաստի Տեղեկատվական Հաստատագրի պատճեն:**

Այս երեք խմբերին պատկանող չափահասները որոնք անցյալում պոլիո պատվաստի (IPV) կամ (OPV) 3 կամ ավելի **դեղաչափեր են ընդունել**, կարող են ընդունել (IPV)-ի լրացուցիչ դեղաչափ:

Հավելյալ տեղեկությունների համար հարցրեք ձեր խնամատար բժիշկին:

4

Որոշ մարդիկ չպետք է ընդունեն IPV կամ պետք է սպասեն

Այս անհատները չպետք է ընդունեն ԻԲԻ:

- Որեւէ անհատ որ երբեւէ ունեցել է կյանքին սպառնացող գերզգայնական հակազդեցություն այնպիսի անտիբիոտիկների նկատմամբ ինչպիսիք են նեոմիցինը, ստրեպտոմիցինը կամ պոլիմիքսին B-ն, չպետք է սրսկվեն պոլիոյի պատվաստով:
- Որեւէ անհատ որ ունեցել է սուր գերզգայնական հակազդեցություն պոլիոյի պատվաստի դեմ չպետք է վերստին պատվաստվի:

Այս անհատները պետք է սպասեն.

- Որեւէ անհատ եթե սրսկում ընդունելուց առաջ թեթեւ կամ լուրջ հիվանդ է ապա պատվաստը չընդունած, պետք է ապաքինվի: Մարդիկ որոնք ունեն թեթեւ հիվանդություններ, ինչպես մրսաձուլություն, կարող են պատվաստվել:

Հավելյալ տեղեկությունների համար հարցրեք ձեր խնամատար բժիշկին:

5

Որո՞ւք են IPV-ի վտանգները

Որոշ մարդիկ որոնք ընդունում են IPV պատվաստ, սրսկման վայրում ցավեր են ունենում: Ներկայումս օգտագործվող պատվաստը լուրջ բարդություններ երբեք չի առաջացրել, եւ շատ մարդիկ բարդություններ երբեք չեն ունեցել նրանից:

Այնուամենայնիվ, որեւէ պատվաստ, ինչպես այլ դեղորայք, կարող է պատճառել լուրջ բարդություններ, ինչպես սուր գերզգայնական հակազդեցություն: *Պոլիոյի սրսկումից լուրջ վնաս, կամ մահ պատճառելու վտանգը, շատ չնչին է:*

6

Ի՞նչ անել լուրջ հակազդեցության դեպքում

Ինչի՞ն պետք է ուշադրություն դարձնեմ Ուշադիր եղեք որեւէ արտասովոր դրության, ինչպես սուր գերզգայնական հակազդեցության, ջերմաստիճանի բարձրացման կամ արտասովոր վարքի:

Եթե սուր գերզգայնական հակազդեցություն առաջանա, ապա դա կարող է պատահել սրսկման ընդունումից մի քանի րոպեից մինչեւ մի քանի ժամ հետո: Սուր գերզգայնական հակազդեցության նախանշաններն են՝ շնչառության դժվարություն, թուլություն, խռպոտություն կամ խզզոց, արագ սրտի զարկ, սուլաքոր, գլխապտույտ, դեղնություն կամ կոկորդի ուռածություն:

Ի՞նչ պետք է անեմ

- Հեռաձայնեք բժիշկին, կամ անհատը տարեք բժիշկի մոտ անմիջապես:
- Հայտնեցեք ձեր բժիշկին եղելության մասին, դեպքի թվականի

եւ ժամանակի մասին, եւ երբ է տրվել պատվաստը:

- Պահանջեցեք ձեր բժիշկից, բուժքրոջից կամ առողջապահական բաժնից Vaccine Adverse Event Reporting System (VAERS) ձեւ լրացնել կամ դուք ինքներդ հեռաձայնեցեք անվճար 1-800-822-7967:

Հակազդեցությունների մասին մասնագետներին հայտնելը օգնում է ավելի իմանալ պատվաստների պատճառող հավանական բարդությունների մասին:

7

Պատվաստի Վնասների Հատուցման Պետական Ծրագիր

Հազվադեպ պարագայում երբ դուք կամ ձեր երեխան ցուցաբերում եք լուրջ հակազդեցություն պատվաստի նկատմամբ, օգնության կարգով ստեղծված է պետական ծրագիր, խնամքի ծախսերը հոգալու նրանց՝ որոնք վնասված են:

Պատվաստի Վնասների Հատուցման Պետական Ծրագրի մանրամասնությունների վերաբերյալ հեռաձայնեցեք 1-800-338-2382 կամ այցելեցեք ծրագրի website-ը հետեւյալ հասցեով <http://www.hrsa.gov/osp/vicp/>

8

Ինչպե՞ս կարող եմ իմանալ ավելին

- Հարցրեք ձեր բժիշկին կամ բուժքրոջը: Նրանք ձեզ կտան պատվաստումների մասին տեղեկատվական գրքույկի ներդիր, կամ կառաջարկեն տեղեկության այլ աղբյուրներ:
- Հեռաձայնեցեք ձեր շրջանային կամ նահանգային բաժնի վարակամերժման ծրագրին:
- Կապվեցեք Centers for Disease Control and Prevention (CDC)-ի հետ.
 - Call 1-800-232-4636 (1-800-CDC-INFO)
 - Այցելեցեք National Immunization Program-ի website-ը հետեւյալ հասցեով. <http://www.cdc.gov/nip>



U.S. DEPARTMENT OF HEALTH & HUMAN SERVICES
Centers for Disease Control and Prevention
National Immunization Program

Vaccine Information Statement
Polio IMM 548 ML - Armenian - (1/1/2000)
Translated by Transcend Translations, Davis, CA
<http://www.transcend.net>